ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5

Բնագիտական առարկաների առարկայական մասնախմբի նիստի

Նիստը կայացել է 2025 թվականի դեկտեմբերի 26-ին:

Նիստին մասնակցել են բնագիտական առարկաների առարկայական մասնախմբի բոլոր անդամները և տնօրենի տեղակալ՝ Լ. Մանվելյանը:

«**Օրակարգում՝**

1. Նիստի օրակարգի հաստատում (զեկուցող՝ Ա. Սահակյան):
2. Նախորդ նիստի ժամանակ կայացված որոշումների կատարման մասին մասնախմբի ղեկավարի զեկուցում:
3. «Թվերի աշխարհ» ամանորյա միջոցառման արդյունքների ամփոփում (զեկուցող՝ Ա. Սահակյան):
4. Առաջին կիսամյակի ծրագրերի կատարողականի ստուգում, արդյունքների քննարկում և ամփոփում (զեկուցող՝ Ա.Սահակյան):
5. Մ/մ անդամների առաջին կիսամյակի հաշվետվությանների ներկայացում (զեկուցող՝ մ/մ անդամներ):
6. 2-րդ կիսամյակի թեմատիկ պլանների վերանայում և ներբեռնում (զեկուցող՝ Ա.Սահակյան):
7. 2-րդ կիսամյակի ընթացքում նախատեսված նախագծային աշխատանքների քննարկում և թեմաների ներկայացում (զեկուցող՝ Ա.Սահակյան):

Լսեցին՝

1. Բնագիտական առարկաներ մասնախմբի ղեկավար՝ Ա.Սահակյանը ներկայացրեց նիստի օրակարգը բաղկացած 7 հարցից:

Լսեցին՝

2. Մ/մ ղեկավար Ա.Սահակյանը զեկուցեց նախորդ նիստի որոշումների կատարման մասին՝ նշելով, որ ուսուցման ընթացքում կիրառվել են նոր մոտեցումներ և մեթոդներ՝ նպատակ ունենալով բարձրացնել սովորողների ներգրավվածությունը:

Լսեցին՝

3. Մ/մ ղեկավար Ա.Սահակյանը ամփոփեց Ա.Անդրեասյանի կողմից 6-րդ Ա և Բ դասարաններում իրականացված միջոցառումը և նշեց, որ մասնակիցները միջոցառմանը մասնակցել են մեծ պատասխանատվությամբ արդյունքում ստացվել է հետաքրքիր ու ուսուցողական միջոցառում:

Լսեցին՝

4. Մ/մ ղեկավար Ա.Սահակյանը զեկուցեց, որ ստուգվել են 1-ին կիսամյակի ծրագրերը և թեմատիկ պլանների մեջ փոփոխություններ չեն կատարվել, քանի որ 1-ին կիսամյակում տոնական և հիշատակի օրեր չկան:

Լսեցին՝

5. Մ/մ ղեկավար Ա.Սահակյանը զեկուցեց, որ մասնախմբի բոլոր անդամները ներկայացրել են 1-ին կիսամյակում կատարված աշխատանքների հաշվետվությունները:

Արտահայտվեցին՝

Լ. Մանվելյանն առաջարկեց հաշվետվության մեջ կիսամյակային գնահատականների միջինից բացի ներառել ԱՈՒՊ-ների առաջին երկու շրջափուլերի գնահատականների միջինը:

Լսեցին՝

6. Մ/մ ղեկավար Ա.Սահակյանը զեկուցեց, որ վերանայվել է 2-րդ կիսամյակի թեմատիկ պլանները, վերացվել է նկատված թերությունները, տրվեց տոնական օրերի ցանկը, որոնք պետք է տեղեկայնացվի պահուստային ժամերի հետ:

Լսեցին՝

7. Բնագիտական առարկաներ մ/մ ղեկավար Ա.Սահակյանը ներկայացրեց, որ 2-րդ կիսամյակի ընթացքում բնագիտական մասնախմբի անդամները պլանավորել են իրականացնել 4 ուսումնական նախագիծ՝ Ա.Թորոյանը «Ես և շրջակա աշխարհը» առարկայից 7^{ա} դասարանում՝ 21.01.2026-04.03.2026 «Բույսեր» թեմայով և 7^{գ} դասարանում 11.03.2026-29.04.2026 «Վայրի և ընտանի կենդանիներ» թեմայով: Ա.Սահակյանը «Բնագիտություն» առարկայից 9-րդ դասարանում 1-ին խմբի հետ «Կաթնասուններ» թեմայով 03.02.2026-17.03.2026 ժամանակահատվածում, իսկ 2-րդ խմբի հետ «Օրգան համակարգեր» թեմայով 31.03.2026-12.05.2026:

Որոշում է

1. Հաստատել մասնախմբի դեկտեմբերի 26-ի նիստի օրակարգ:
2. Ընդունել ի գիտություն նախորդ նիստի որոշումների կատարման վերաբերյալ մասնախմբի ղեկավարի զեկուցումը՝ արձանագրելով, որ իրականացված աշխատանքների արդյունքները եղել են գոհացնող:
3. Ընդունել ի գիտություն 6-րդ Ա և Բ դասարաններում իրականացված միջոցառման արդյունքները և հանձնարարել շարունակել նմանատիպ միջոցառումների կազմակերպումը՝ պահպանելով մասնակցության բարձր մակարդակն ու ուսուցողական արդյունավետությունը:
4. Ընդունել ի գիտություն 1-ին կիսամյակի ծրագրերի կատարողականի վերաբերյալ մասնախմբի ղեկավարի ներկայացված ամփոփումը:
5. Բնագիտական առարկաներ մ/մ ղեկավար Ա.Սահակյանը առաջարկեց շտկել հաշվետվություններում առկա թերությունները և ներկայացնել տնօրենին՝ հաստատման:
6. Բնագիտական առարկաներ մ/մ ղեկավար Ա.Սահակյանը հանձնարարեց 2-րդ կիսամյակի թեմատիկ պլանները ներբեռնել դպրոցների կառավարման տեղեկատվական համակարգ՝ սահմանելով վերջնաժամկետ հունվարի 9-ը:

7. Հաստատել բնագիտական առարկաների շրջանակում իրականացվելիք նախագծային աշխատանքների թեմաները, դասարանները և ժամկետները՝ համաձայն ներկայացված ժամանակացույցի, և հանձնարարել պատասխանատու մանկավարժներին ապահովել նախագծային աշխատանքների իրականացումը սահմանված կարգով: Հանձնարարվեց կազմել ուսումնական նախագծերի պլանները և ներկայացնել տնօրենի հաստատմանը:

Առարկայական մասնախմբի ղեկավար՝ Ա.Սահակյան

Քարտուղար՝ Ա. Խուբլարյան

30.12.2025